Հաստատում եմ
Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական
համալսարանի ռեկտոր Է. Մերոբյան
« 07 » հոկտեմբերի 2022թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱՋՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի՝ **«Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում»** վերնագրով ԺԳ.00.01 թվանիշով, «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Արդի պայմաններում հանրակրթության բնագավառում ընթացող կրթադաստիարակչական գործընթացների հիմքում ընկած են բազմաթիվ նորարարական մոտեցումներ, որտեղ որոշակիորեն ընդգծվում է ուսումնական խմբի անդամների անհատական առանձնահատկությունների հաշվառման անհրաժեշտությունը: Սա մարդասիրության յուրահատուկ դրսևորում է և մարդու արժևորման, նրա բացառիկության ընդունման փաստ: Սակայն բազմաթիվ ուսումնասիրություններ և վերլուծություններ վկայում են, որ այս սկզբունքի կիրառման ընթացքում դեռևս կան դժվարություններ, խնդիրներ ու խոչընդոտներ, որոնք լիովին բացահայտված չեն: Ուսումնասիրված, բացահայտված և մշակված չեն դրանց հաղթահարման հնարավորությունները, համապատասխան ուղիները: Թեմայի արդիականությունն առավելապես հիմնավորվում է համընդհանուր ներառականության պայմաններում:

Ատենախոսության ներածությունում հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, ներկայացված է թեմայի մշակվածության աստիճանը, որոշված է հետազոտության նպատակը, օբյեկտը, առարկան, առաջադրված են հետազոտության խնդիրները, գիտական վարկածը, գիտական նորույթը, որոնք բխում են հետազոտության նպատակից: Ներկայացված են հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, պաշտպանության ներկայացվող դրույթները, հետազոտության հավաստիությունն ու

հիմնավորվածությունը: Ներածության մեջ ներկայացված են նաև աշխատանքի իրականացման երեք փուլերը, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Հետազոտական ապարատի բոլոր բաղադրիչները փոխկապված և փոխպայմանավորված են:

Աշխատանքի առաջին գլուխը կրում է <<Անհատական մոտեցման սկզբունքն ուսուցման սկզբունքների համակարգում>> խորագիրը, որը կազմված է երեք ենթագլուխներից, որտեղ մանրամասնորեն ներկայացվում են կրթական համակարգի զարգացման գործում ուսուցման սկզբունքների նշանակությանը վերաբերող տարբեր հեղինակների ուսումնասիրություններն ու տեսական մոտեցումները:

Հեղինակն անդրադառնում է ուսուցման սկզբունքների դասակարգման հարցերին և քննարկում դրանց առանցքային նշանակությունն ու առանձնահատկությունները:

Ատենախոսության երկրորդ գլխում հեղինակին հաջողվել է վերլուծել և համակարգված ներկայացնել անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հայեցակարգային մոտեցումները և քննարկել անհատական մոտեցման սկզբունքի իրականացման հիմնահարցերը ժամանակակից դպրոցում: Ուշագրավ են ուսուցման գործընթացում անհատական մոտեցման սկզբունքից բխող հիմնական պահանջներին վերաբերող ուսումնասիրությունները, ուսուցման բովանդակությանը, պլանավորմանը, ստուգմանն ու գնահատմանը վերաբերող հեղինակի գրագետ վերլուծություններն ու դիրքորոշումները: Իրավացիորեն հեղինակն առաջադրում է ուսումնական խմբի յուրաքանչյուր անդամի համար ակտիվ, գործող սուբյեկտի կարգավիճակի ապահովման հիմնահարցը, և հիմնավորում ուսումնական գործընթացի սուբյեկտների միջև հարաբերությունների կարգավորման անհրաժեշտությունը: Կարևորվում է տարրական դպրոցում կոլեկտիվ ուսումնական պարապմունքների անցկացման հնարավորությունների հարցի քննարկումն անհատական մոտեցման սկզբունքի իրականացման տեսանկյունից, որի արդյունքում ատենախոսն մեկնաբանում է այդ սկզբունքից բխող հիմնական պահանջների բավարարման համար անհրաժեշտ բոլոր հնարավորություններն ու պայմանները:

Աշխատանքի երրորդ՝ <<Փորձարարական հետազոտության արդյունքների վերլուծություն>> խորագիրը կրող գլխում ներկայացված է կատարված

փորձարարական աշխատանքի համապարփակ ներկայացում, այն իր մեջ պարունակում է տարրական դպրոցի 122 ուսուցիչների շրջանում անցկացված հարցման արդյունքների վերաբերյալ ամփոփ տեղեկատվություն, վերլուծություն, եզրակացություն: Արժևորում ենք ատենախոսի կողմից տարրական դպրոցում անհատական մոտեցման սկզբունքի կիրառմամբ ուսուցման գործընթացի կազմակերպման մոդելի մշակումը: Կարևորում ենք մշակված մոդելի կառուցվածքի, առավելությունների համակարգված, ամբողջական ներկայացումը, տվյալ մոդելի իրականացման ընթացքում հանդիպող խոչընդոտների առանձնացումը:

Ատենախոսության եզրակացությունները ձևակերպված են գրագետ և հիմնավոր, դրանք առաջադրված խնդիրների լուծումներն են:

Գրականության ցանկը հղված է ատենախոսության շարադրանքում:

Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի՝ «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում»» թեմայով ատենախոսությունը գիտական արժեք ներկայացնող հետազոտական աշխատանք է, որը կարող է նպաստել տարրական դպրոցի զարգացմանը, դասվարների արդյունավետ գործունեությանը, սովորողների կրթական պահանջմունքների բավարարմանը:

Նշենք մի քանի նկատառումներ հետազոտական աշխատանքի վերաբերյալ.

1. Ատենախոսության գլուխները կարելի էր ավարտել ամփոփումներով:
2. Աշխատանքի փորձարարական հատվածում նշված են այն մարզերը, որտեղ անցկացվել են հարցումները, կարծում ենք կարելի էր նշել նաև այն դպրոցները, որտեղ դրանք անցկացվել են:
3. Երրորդ կետում ներկայացված եզրակացության բովանդակությունը կարելի էր բաժանել երկու մասի՝ հիմնավորումն առավել ընդարձակ ներկայացնելու նպատակով:
4. Աշխատանքում կան տեխնիկական վրիպակներ:

Նշված նկատառումները չեն ստվերում ատենախոսության գիտական արժեքն ու կշիռը, աշխատանքն ունի գիտատեսական, գիտապրակտիկ կարևոր նշանակություն մանկավարժական գիտությունների համակարգում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Վարդիթեր Ջանիբեկի Մկրտչյանի՝ «Անհատական մոտեցման սկզբունքի իրականացման դժվարություններն ու դրանց հաղթահարման ուղիները տարրական դպրոցում»» խորագրով թեկնածուական ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին և իր՝ ԺԳ.00.01 (Մանկավարժության տեսություն և պատմություն) մասնագիտական թվանիշին, իսկ հեղինակն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Կարծիքը քննարկվել և ընդունվել է 2022 թվականի 7 հոկտեմբերի մանկավարժության ամբիոնի թիվ երրորդ նիստում:

Ամբիոնի նիստին մասնակցել են մանկ.գիտ. դոկտոր, պրոֆեսոր Ա. Մկոյանը, Ռ. Մարդոյանը, Ս. Սողոյանը, մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյանը, Մ. Կարապետյանը, Լ. Հակոբյանը, Ն. Ադամյանը, Լ. Միքաելյանը, Ա. Յայլոյանը, Ն. Գրիգորյանը, մանկ. գիտ. թեկն. Շ. Ալեքսանյանը, Ա. Զաղոյանը, բանասիր. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Գևորգյանը, դասախոսներ Մ. Խաչատրյանը, Ի. Շուխյանը, Լ. Բաղդասարյանը, Ս. Համբարյանը:

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ,
մանկ. գիտ. թեկնածու, դոցենտ Լ. Ղուկասյան

Մանկավարժության ամբիոնի վարիչի ԺՊ Լ. Ղուկասյանի ստորագրությունը հաստատում եմ:

ՇՊՀ-ի գիտքարտուղար Կ. Պետրոսյան

06.10.2022թ.